Հաստատված է ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ
«_31_ »__08__ 2020 թ.-ի նիստում (արձ. թիվ 1):
Ամբիոնի պետ, ոստ. փոխգնդապետ
Ա. Հովհաննիսյան ……
(ստորագրություն)

……
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Հետաքննությունը ոստիկանությունում (առկա անվճար ուսուցում)
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Քրեական դատավարության ամբիոն E-mail: qrdatambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ա. Հովհաննիսյան (ի.գ.թ., դոցենտ) E-mail: qrdatambion@mail.ru Հեռ.՝ +374 93000762
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		3-րդ կուրս, 2-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**2 (երկու)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«Հետաքննությունը ոստիկանությունում» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 60 ժամ, որից 16-ը՝ դասախոսություն, 8-ը՝ սեմինար, 8-ը՝ գործնական, 28-ը՝ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացը գնահատվում է միջանկյալ քննությունների և կիսամյակային եզրափակիչ քննության անցկացմամբ:
ՄՈՒՏՔԱՅԻՆ		Դասընթացը կառուցվում է «ՀՀ քրեական դատավարության

ՊԱՀԱՆՋՆԵՐ		իրավունք» դասընթացի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«Հետաքննությունը ոստիկանությունում» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են քրեական գործի հարուցման, հետաքննության՝ որպես նախնական քննության ինքնուրույն ձևի պայմանները, անհետաձգելի քննչական գործողությունների իրականացման կարգը և պայմանները, քրեական գործի հարուցման և հետաքննության օրինականության նկատմամբ հսկողական-վերահսկողական կառուցակարգերը:
ՆՊԱՏԱԿ/ԽՆԴԻՐՆԵՐ		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ քրեական գործի հարուցման ու հետաքննության ոլորտում: Դասընթացի խնդիրներն են՝ 1) ներկայացնել քրեական գործի հարուցման առիթի օրինականության և հիմքերի առկայության պարզմանն ուղղված դատավարական և օպերատիվ-հետախուզական գործողությունները, քրեական գործ հարուցելու մասին որոշման կայացումը 2) ներկայացնել քրեական գործի հարուցումը մերժելու և հաղորդումն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշումների կայացումը 3) բացատրել քրեական գործի հարուցման փուլից հրաժարվելու պատճառները և հիմնավորումները ՀՀ քր. դատ. օր.-ի նախագծի լույսի ներքո 4) ներկայացնել քննչական գործողությունների կատարումը հետաքննության իրականացման ժամանակ 5) ներկայացնել հետաքննության ավարտման նշանակությունը և ձևերը 6) բացատրել հետաքննության մարմնի կողմից կատարվող գործողությունների, կայացվող որոշումների, կիրառվող հարկադրանքի միջոցների դատական բողոքարկման կարգը 7) ներկայացնել քրեական գործի հարուցման և հետաքննության օրինականության նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը 8) ներկայացնել քրեական գործի հարուցման և հետաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը:

ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ **1. *Կարողանա՝***		1. նկարագրել քրեական գործի հարուցման փուլի նշանակությունը և խնդիրները. 2. կատարել անհետաձգելի քննչական գործողություններ և փաստաթղթավորել դրանք. 3. օրենքով սահմանված կարգին համապատասխան կայացնել անհրաժեշտ որոշումներ. 4. նկարագրել հետաքննության մարմնի կողմից կատարվող գործողությունների, կայացվող որոշումների, կիրառվող հարկադրանքի միջոցների դատական բողոքարկման կարգը. 5. նկարագրել քրեական գործի հարուցման և հետաքննության օրինականության նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը. 6. նկարագրել քրեական գործի հարուցման և հետաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2/ Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան. – Եր., Տիգրան Մեծ, 2017: 2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս. Երևան, Երևանի համալս. հրատ., 2010: 3. Уголовный процесс: учебник / под ред.: Божьев В.П. – 4-е изд., перераб. и доп. – М.: Спарк, 2004. 4. Уголовно-процессуальное право Российской Федерации: учебник / отв. ред. П.А. Лупинская. – М., 2011. 5. Уголовный процесс. Общая и Особенная части: учебник для юридических вузов и факультетов / под ред.: В.В. Вандышева – М.: Контракт, 2014. 6. Уголовно-процессуальное право: учебник для бакалавриата и магистратуры / под общ. ред.: В.М. Лебедева. – 2-е изд., пер. и доп. – М.: Издательство Юрайт, 2017.
Լրացուցիչ		1) Марфицин, П.Г. Возбуждение уголовного дела в отношении лица, подозреваемого в совершении преступления: монография / П.Г. Марфицин. – Н. Новгород: Нижегородская академия МВД России, 2009. 2) Черепанова, Л.В. Возбуждение уголовного дела в вопросах и ответах: учебно-методическое пособие / Л.В. Черепанова. – М., 2012. 3) Цапко, Ж.Б. Возбуждение уголовного дела: учебное пособие / Ж.Б. Цапко. – М., 2011. 4) Азаров, В.А. Функция предварительного расследования в

		истории, теории и практике уголовного процесса России: монография / В.А. Азаров, Н.И. Ревенко, М.М. Кузембаева. – Омск: Изд-во ОмГУ, 2006. 5) Есина, А.С. Производство дознания органами внутренних дел: некоторые процессуальные и организационные аспекты / А.С. Есина // Электронный ресурс, подготовлено для СПС Консультант плюс, 2007. 6) Ефимичев, П.С. Расследование преступлений: теория, практика, обеспечение прав личности : монография / П.С. Ефимичев, С.П. Ефимичев. – М.: Юстицинформ, 2012. 7) Малышева, О.А. Предварительное расследование по УПК России (процессуальные и организационно-правовые аспекты): монография / О.А. Малышева. – М., 2004.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Բաղադրիչ 1 - ստուգարք
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		**Գնահատականը տառանշումով** Ստուգված Չստուգված Չներկայացած
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.

		գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:
Ներկայություն **Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ** **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ**		Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը: Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր: Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը՝ ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 Հետաքննության մարմնի գործունեությունը քրեական գործի հարուցման փուլում **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական պարապմունք)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական գործի հարուցման առիթի օրինականության և հիմքերի առկայության պարզմանն ուղղված դատավարական և օպերատիվ-հետախուզական գործողությունները 2. Քրեական գործ հարուցելու մասին որոշման կայացումը 3. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման կայացումը 4. Հաղորդումն ըստ ընդդատության ուղարկելու մասի որոշումը և դրա հետևանքները 5. Քրեական գործի հարուցման փուլից հրաժարվելու պատճառները և հիմնավորումները ՀՀ քր. դատ. օր.-ի նախագծի լույսի ներքո	Հարցեր 1-5՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-3՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: Հարցեր 2,3՝ գործնական պարապմունք – քրեական գործի հարուցման և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների ձևաթղթերի պատրաստում. Հարց 1,2,4, 5՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 2 Անհետաձգելի քննչական գործողությունների իրականացման առանձնահատկությունները **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական պարապմունք)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Անհետաձգելիությունը որպես քննչական գործողության հատկանիշ. 2. Մարդու սահմանադրական իրավունքները սահմանափակող քննչական գործողությունների կատարումը հետաքննության իրականացման ժամանակ 3. Քննչական այլ գործողությունների կատարումը հետաքննության իրականացման ժամանակ	Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-3՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: Հարց 3՝ գործնական պարապմունք – քննչական գործողությունների արձանագրությունների ձևաթղթերի կազմում: Հարցեր 1-3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 3 Հետաքննության ավարտը: Հետաքննության մարմնի կողմից քրեական գործը քննիչին ուղարկելը **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական պարապմունք)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հետաքննության ավարտման նշանակությունը և ձևերը: Քրեական գործը քննիչին ուղարկելու մասին որոշման կայացման կարգը 2. Հանցանք կատարած անձի ի հայտ գալու դեպքում հետաքննության ավարտման կարգը 3. Դատախազի կողմից քրեական գործը նախաքննության մարմնին փոխանցելու դեպքում հետաքննության ավարտման կարգը 4. Գործի քննությանը քննիչի ներգրավման դեպքում հետաքննության ավարտման կարգը 5. Հետաքննության դատավարական ժամկետը լրանալու դեպքում հետաքննության ավարտման կարգը	Հարցեր 1-5՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարց 1՝ գործնական պարապմունք – Քրեական գործը քննիչին ուղարկելու մասին որոշման կայացում: Հարցեր 1-5՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 4 Դատական վերահսկողությունը քրեական գործի հարուցման և հետաքննության օրինականության նկատմամբ **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական պարապմունք)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դատական բողոքարկումը 2. Հետաքննության ժամանակ կատարված քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների բողոքարկումը դատարան 3. Ձերբակալման և դատավարական հարկադրանքի մյուս միջոցների բողոքարկումը դատարան	Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-3՝ գործնական պարապմունք – Դատական բողոքարկման փաստաթղթերի կազմում: Հարցեր 1-3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 5 Գերատեսչական վերահսկողությունը քրեական գործի հարուցման և հետաքննության օրինականության նկատմամբ **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հանցագործության մասին հաղորդումների ստուգման նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը 2. Նյութերի նախապատրաստման արդյունքում որոշումների կայացման նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը 3. Հետաքննության մարմնի կողմից կատարվող գործողությունների և հարկադրանքի միջոցների կիրառման նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը: Քրեական գործը քննիչին ուղարկելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը:	Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 6 Դատախազական հսկողությունը քրեական գործի հարուցման և հետաքննության օրինականության նկատմամբ **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հանցագործության մասին հաղորդումների ստուգման նկատմամբ դատախազական հսկողությունը 2. Նյութերի նախապատրաստման արդյունքում որոշումների կայացման նկատմամբ դատախազական հսկողությունը 3. Հետաքննության մարմնի կողմից կատարվող գործողությունների և հարկադրանքի միջոցների կիրառման նկատմամբ դատախազական հսկողությունը: Քրեական գործը քննիչին ուղարկելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության նկատմամբ դատախազական հսկողությունը:	Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-3՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: Հարցեր 1-3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

ՀԱՐՑԱՇԱՐ

«Հետաքննությունը ոստիկանությունում» դասընթացից ստուգարքի

1) Քրեական գործի հարուցման առիթի օրինականության և հիմքերի առկայության պարզմանն ուղղված դատավարական և օպերատիվ-հետախուզական գործողությունները

2) Քրեական գործ հարուցելու մասին որոշման կայացումը

3) Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման կայացումը

4) Հաղորդումն ըստ ընդդատության ուղարկելու մասի որոշումը և դրա հետևանքները

5) Քրեական գործի հարուցման փուլից հրաժարվելու պատճառները և հիմնավորումները ՀՀ քր. դատ. օր.-ի նախագծի լույսի ներքո

6) Անհետաձգելիությունը որպես քննչական գործողության հատկանիշ.

7) Մարդու սահմանադրական իրավունքները սահմանափակող քննչական գործողությունների կատարումը հետաքննության իրականացման ժամանակ

8) Քննչական այլ գործողությունների կատարումը հետաքննության իրականացման ժամանակ

9) Հետաքննության ավարտման նշանակությունը և ձևերը: Քրեական գործը քննիչին ուղարկելու մասին որոշման կայացման կարգը

10) Հանցանք կատարած անձի ի հայտ գալու դեպքում հետաքննության ավարտման կարգը

11) Դատախազի կողմից քրեական գործը նախաքննության մարմնին փոխանցելու դեպքում հետաքննության ավարտման կարգը

12) Գործի քննությանը քննիչի ներգրավման դեպքում հետաքննության ավարտման կարգը

13) Հետաքննության դատավարական ժամկետը լրանալու դեպքում հետաքննության ավարտման կարգը

14) Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դատական բողոքարկումը

15) Հետաքննության ժամանակ կատարված քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների բողոքարկումը դատարան

16) Ձերբակալման և դատավարական հարկադրանքի մյուս միջոցների բողոքարկումը դատարան

17) Հանցագործության մասին հաղորդումների ստուգման նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը

18) Նյութերի նախապատրաստման արդյունքում որոշումների կայացման նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը

19) Հետաքննության մարմնի կողմից կատարվող գործողությունների և հարկադրանքի միջոցների կիրառման նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը:

20) Քրեական գործը քննիչին ուղարկելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը

21) Հանցագործության մասին հաղորդումների ստուգման նկատմամբ դատախազական հսկողությունը

22) Նյութերի նախապատրաստման արդյունքում որոշումների կայացման նկատմամբ դատախազական հսկողությունը

23) Հետաքննության մարմնի կողմից կատարվող գործողությունների և հարկադրանքի միջոցների կիրառման նկատմամբ դատախազական հսկողությունը

24) Քրեական գործը քննիչին ուղարկելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության նկատմամբ դատախազական հսկողությունը